ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Պատմության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ա.Տ. Մելիքյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 9

« 05 » փետրվարի, 2026 թ.

Պ/բ-067 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ II ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ բոլոր մասնագիտությունների համար

Կրթական ծրագիր՝ բոլոր կրթական ծրագրերի համար

Որակավորման աստիճան՝ բակալավր
/

Ամբիոն՝ Պատմություն

Ուսուցման ձևը՝ առկա

Կուրս/կիսամյակ առկա I կուրս/ II կիսամյակ

Դասախոս(ներ) Յու. Ղուլյան, Զ. Չատինյան,

Ա. Բերնեցյան, Է. Շարոյան

Վանաձոր- 2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հայոց պատմություն» դասընթացը կարևորվում է բոլոր բնագավառներում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրի ուսումնական պլանի «Աշխարհայացքային և հաղորդակցական» կրթամասում:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

2.1. Դասընթացի նպատակն է.

- Հայոց ազատագրական պայքարի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Ցույց տալ պատմական գիտելիքների դերը կյանքում, պատմության դասերի անհրաժեշտությունը
- Հայոց պատմության իրադարձությունները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:
- Տալ գիտելիքներ հայոց պատմության կարևորագույն իրադարձությունների՝ հայ ազգային ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ՝ սկսած 19-րդ դարի ազատագրական պայքարից մինչև Արցախյան շարժում:

2.2. Դասընթացի խնդիրներն են

- Սովորեցնել հայոց պատմության տեսական հիմքերը:
- Բացատրել պատմական պատճառահետևանքային օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել հայոց պատմության ազատագրական պայքարի առանձնահատկությունները և ինքնուրույն եզրահանգումներ անել:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները,**

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

կարողությունները և հմտությունները

«Հայոց պատմություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների հայոց պատմության հնագույն, հին, միջին և արդի շրջանների մասին տարական դպրոցական գիտելիքների, մայրենի լեզվով գրագետ մտքերը շարադրելու հմտության առկայությունը:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.**

«Հայոց պատմություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

Իմանա՝

1. Հայ ազատագրական շարժման նախադրյալները
2. Կարբեր ժամանակներում ծագած հայ ազատագրաան պայքարի պատճառները, ընթացքը, նշանակությունը
3. Հայ ազատագրական պայքարի դերը հայ ժողովրդի կյանքում
4. Հայկական հարցի ծագումը, միջազգայնացումը
5. Արցախյան շարժման նոր փուլը

Կարողանա՝

1. ձեռք բերած տեսական գիտեկիքները կիրառել գործնականում:
2. որոշ դիտական հարցերի վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարել:
3. կարողանա իրադարձությունները վերլուծել և համադրել
4. կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները
5. կարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից
6. ներկայացնել հայ ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարում

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

7. ներկայացնել հայկական հարցի ծագումը, ընթացքը, բովանդակությունը

8. ներկայացնել 1915 թվականի ինքնապաշտպանական մարտերը

9. գիտելիքներ ունենա Հայաստանի Առաջին և Երրորրդ հանրապետությունների հռչակման, ներքին արտաքին քաղաքականության և մի շարք կարևոր իրադարձությունների մասին:

Տիրապետի՝

1. պատմական հետազոտությունների մեթոդներին:

2. Հայոց պատմության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների

3. ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

<u>ԳԿ -1-</u> վերլուծության և համադրության կարողություն

<u>ԳԿ-2-</u> կազմակերպչական կարողություն (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)

<u>ԳԿ - 3</u> -հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում

<u>ԳԿ – 4-</u> պետական լեզվով հաղորդակցվելու կարողություն

<u>ԳԿ–7-</u> տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում)

<u>ԳԿ - 9</u> - որոշումներ կայացնելու կարողություն

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

<u>ՀԳԿ -1-</u>գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն

<u>ՀԳԿ -2-</u>հետազոտական կարողություն

<u>ՀԳԿ -3-</u>ուսումնառության կարողություն

<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

ՄԿ-1-ունենա հիմնարար գիտելիքներ պատմությունից և կարողանա դրանք կիրառել գործնականում

ՄԿ-3-կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները

ՄԿ-4-կարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային գործընթացների ազդեցությունը

ՄԿ-5 -ունենա սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ

ՄԿ-6-կարողանա կոնկրետ տեսական գիտելիքները կիրառել պատմական իրողությունները հասկանալու համար

ՄԿ-7 -կարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից

ՄԿ-8-կարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար

ՄԿ-11- կարողանա պատասխանատվություն ստանձնել հետագա ուսումնառության համար

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Հայոց պատմություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել ցանկացած ոլորտի մասնագիտական գործունեության ընթացքում՝ հայրենական պատմության իմացության, հայրենասիրական գործունեություն ծավալելու, սեփական ժողովրդի մշակույթի, դերի և տեղի իմացության տեսանկյունից։

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

	համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**2 կրեդիտ/60 ժամ**

Աշխատանքի տեսակը	**ժամաքանակ**
Դասախոսություն	14
Գործնական աշխատանք	-
Սեմինար պարապմունք	14
Լաբորատոր աշխատանք	-
Ինքնուրույն աշխատանք	32
Ընդամենը	60
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ստուգարք

7. **<u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>**[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն:

---

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում։

[7] Ներկայացված են օրինակներ։ Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել։

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացում	2				
2.	Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ		2			
3.	Ֆիդայական շարժում	2				
4.	Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները	2				
5.	Ազգային կուսակցությունների առաջացումը	2				
6.	Հայկական հարցը 1912-1914 թթ.		2			
7.	Հայոց Մեծ եղեռնը	2				
8.	1915 թ. ինքնապաշտպանական մարտերը		2			
9.	1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը		2			
10.	Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ	2				
11.	Զենգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.	2				

[8] Նման է օրացուցային պլանին

12.	Արցախյան շարժման նոր փուլը		2			
13.	Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը		2			
14.	ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը		2			
ԸՆԴԱՄԵՆԸ		14	14			

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	**Անվանումը/հեղինակ**	**Հրատարակության տարի**
	Գրականություն (Գ)	
1.	Մելքոնյան Ա, «Հայոց պատմության ակնարկներ(հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջ»	Երևան, 2018
2.	Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ.,	Երևան, 2018
3	Սիմոնյան Ա. «Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ.»	Երևան, 2017
4	Սիմոնյան Ա. «Զանգեզուրի գոյապայքարը 1917-1921 թթ.	Երևան, 2017
5.	Էդուարդ Դանիելյան, Աշոտ Մելքոնյան «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»	Երևան, 2015
6.	Վարդան Գէորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921 թթ.), հ. 3	Երևան, 2010
7.	Սիմոնյան Հ. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»	Երևան, 2012
8.	Մելքոնյան Ա, Մինասյան Է. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև	Երևան, 2009

	մեր օրերը»	
9.	Խաչատրյան Կ. «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.»	Երևան, 2007
10.	Գալոյան Գ. «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում»	Երևան, 2004
11.	Կարապետյան Մ. Ս. «Հայաստանը 1912-1920 թթ.»	Երևան, 2003
12.	Սիմոնյան Հ. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»	Երևան, 2000
13.	Ժամկոչյան Հ., Գ. Աբրահամյան Ա., Մելիք- Բախշյան Ս. «Հայ ժողովրդի պատմություն»	Երևան, 1976
14.	ժամկոչյան Հ.Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ատ.Տ., Պողոսյան Ս.Պ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը)	Երևան, 1975
15.	Վրացյան Ս. «Հայաստանի Հանրապետություն»	Երևան, 1993
16.	Զոհրաբյան Է.Ա. «1920թ. թուրք -հայկական պատերազմը և տերությունները»	Երևան, 1997
17.	Ավետիսյան Հ.Ա. «Հայկական հարցը 1918թ.»	Երևան, 1997
18.	Համբարյան Ա.Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908)	Երևան, 1999
19.	Սիմոնյան Հր. Անդրանիկի ժամանակը, գիրք 1-2	Երևան, 1996
20.	Խուրշուդյան Լ.Ա. Հայկական հարցը, բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը,	Երևան, 1995
21.	Հայոց ցեղասպանություն, պատճառներ և դասեր, մաս. 1-3	Երևան, 1995
22.	Սիմոնյան Հր. Թուրք –հայկական հարաբերությունների պատմությունից	Երևան, 1991

23.	Դիլոյան Վ.Ա. «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները»	Երևան, 1989
24.	Հայ ժողովրդի պատմություն, հա. IV–VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ.,	Երևան, 1967, 1970, 1972, 1974, 1981
25.	Աբրահամյան Ա.Գ., «Իսրայել Օրի»	Երևան, 1978
26.	Արզումանյան Մ.Վ. «Հայաստան 1914-1917 թթ.»	Երևան, 1969
27.	Աբրահամյան Ա.Գ. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հտ. Ա,Բ	Երևան, 1964, 1967
28.	Անասյան Հ.Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում	Երևան, 1961
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Karapetyan-Hayastan.pdf	
2.	https://library.anau.am/images/stories/grqer/hasarak/hayoc_patm_Simonyan.pdf	
3.	http://www.historyofarmenia-am.armin.am/am/maps/latter-%D5%87/title	
4.	http://hygradaran.weebly.com/uploads/1/1/8/6/11869782/njdeh_hatntir.pdf	
5.	http://www.armin.am/am/Library-Books-Historiography/latter-%D4%B3/title	
6.	http://www.armin.am/am/Library-Books	
7.	http://www.armin.am/am/Library-Maps	
8	http://www.armin.am/am/Movies	
9.	http://karabakhcenter.com/hy/phastatghter/	

10.	http://karabakhcenter.com/hy/maps/	
11.	http://www.armeniansgenocide-am.armin.am/am/Photos	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[9]
1.	Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացում	Հայկական հարցի ծագման հարցը հայ պատմագիտության մեջ: Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը. հայկական հարցի միջազգայնացումը: Սան-Ստեֆանոյի կոնֆերանսը: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Եվրոպական պետությունների և Ռուսաստանի հակամարտությունները: Հայկական ազգային պատվիրակության գործունեությունը: Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագիրը: 1878թ. մայիսի 30-ի անգլո-ռոսական պայմանագիրը: 1878թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական համաձայնագիրը: Բեռլինի կոնգրեսը: Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը: Հայկական հարցի միջազգայնացումը:	2	Գ 1, 2,5,7,8,12,13,14,20,24
2.	Ֆիդայական շարժում	Ֆիդայական շարժման ակզբնավորումը: Ֆիդայական շարժման ականավոր գործիչները (Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Հրայր, Գևորգ Չաուշ, Արաբո և այլք): Ֆիդայական շարժման	2	Գ 1, 2,5,7,8,12,13,14,18,19,24

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		ընթացքը, հետևանքները: Ազատագրական պայքարի նոր մարտավարություն		
3.	Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները	Զինված պայքարով Հայաստանն ազատագրելու նպատակով ստեղծված խմբակներն ու կազմակերպությունները: Ալեքսանդրապոլի «Բարենպատակ»ընկերությունը: Երևանի «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը: Թիֆլիսի հայրենասիրական խմբակը: Վանի «Միություն ի փրկություն» խմբակը: Վանի «Սև խաչ» կազմակերպությունը:	2	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
4.	Ազգային կուսակցությունների առաջացումը	Կուսակցությունների առաջացման պատմական պայմանները, անհրաժեշտությունը և խնդիրները: Ազգային կոաակցությունները Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի կազմակերպիչներ և ղեկավարներ: Ա.Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: Արմենական կոաակցությունը և «Արմենիա» թերթը: Հնչակյան կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Հնչակ»թերթը: Հ. Հ. Դաշնակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Դրոշակ» թերթը	2	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
5.	Հայոց Մեծ եղեռնը	Արևմտահայերի ցեղասպանության երիտթուրքերի ծրագիրը: 1915թ. ապրիլի 24-ի հայ մտավորականության ջարդը: Ցեղասպանության ծրագրված բնույթը, իրականացման մեխանիզմներն ու ձևերը: «Նեմեսիս» գործողությունը:	2	Գ 1, 2,57,8,12,13,14,21,24

6.	Հայաստանի Առաջին հանրապետռությունը 1918-1820 թթ	Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: Սոցիալ - տնտեսական վիճակը: Հայաստանի տնտեսության քայքայվածությունգյուղատնտեսություն,արդյունաբերություն, տրանսպորտ, ֆինանսներ: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Հարաբերությունները Քառյակ միության հետ: Հարաբերությունները Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության հետ: Հայ-վրացական կոնֆերանսը (1919թ. հունվար): Լոռու «Չեզոք գոտու» ստեղծումը: Հայ-վրացական հարաբերությունների կանոնավորումը: Ադրբեջանի Հանրապետության տարածքային հավակնությունները Հայաստանի նկատմամբ. Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան, Շարուր-Դարալագյազ: Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում, Նախիջևանում, Շարուր– Դարալագյազում և Կարսի մարզում: Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը: Հայկական պատվիրակությունները Փարիզում,նրանց ծրագրերը, կոնֆերանսին ներկայացված հուշագիրը Միացյալ և Անկախ Հայաստանի վերաբերյալ: 1920թ. օգոստսի 10-ի Սևրի պայմանագիրը: Հայաստանի հանրապետուրյան անկումը: Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի պայմանագիրը:	2	Գ 1, 2,5,7,8,9,11, 12,13,14,15,16,17,22, 24, 26
7.	Զենգեզուրի	Զենգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.	2	Գ 1, 2,3,4,7,8,12,13,14,24

	ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.			

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ	Սասունի 1894 և Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունները: 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը: 1897 թ. Խանասորի արշավանքը:	2	Ավանդական հարցում, հարզախույզ	Գ 1, 2,7,8,12,13,14,18,19,24
2.	Հայկական հարցը 1912-1914 թթ.:	1912թ. Բալկանյան 1-ին պատերազմը: Հայկական հարցի վերաբացումը: Գևորգ Ե կաթողիկոսի դիմումը ռուսաց կայսրին: Կ.Պոլսի ազգային ժողովի դիմումը մեծ տերություններին: Պողոս Նուբարը Գևորգ Ե կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Եվրոպայում: Մեծ տերությունները և Հայկական	2	Ավանդական հարցում, բանավեճ-քննարկում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,20,24

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		հարցը: Ռուսաստանի ակտիվ աջակցությունը Հայկական հարցին: Հայկական բարենորոգումների ռուսական նախագիծը (Ա.Մանդելշտամ): Մեծ տերությունների տարաձայնությունները Հայկական հարցում: Գերմանիայի դիրքորոշումը: 1914թ. հունվարի 26-ի ռուս –թուրքական համաձայնագիրը:			
3.	1915 թ. ինքնապաշտպանական մարտերը	Ինքնապաշտպանական մարտերը Վանում, Մուշում, Սասունում, Շապին- Կարահիսարում, Սուետիայում, Ուրֆայում, Շատախում: Ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը Հայկական սփյուռքի առաջացումը	2	Ավանդական հարցում, հարզախույզ	Գ 1, 2,57,8,11,12,13,14,24
4.	1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը	Թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում: Մայիսյան հերոսամարտերը, Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա: Հայաստանի Հանրապետության հռչակումը: Անկախ պետականության կայացումը:	2	Ավանդական հարցում, հարզախույզ	Գ 1, 2,7,8,11,12,13,14,15,24

5.	Արցախյան շարժման նոր փուլը	Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը: Ղարաբաղյան շարժման սկիզբը: ԼՂԻՄ պատգամավորների մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը: Զանգվածային հանրահավաքները Երևանում և Ստեփանակերտում: Սումգայիթյան ողբերգությունը: Ազգային պայքարի վերելքը: ՀՀ գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989թ. համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: ԼՂՀ անկախության հռչակումը: (1991թ. սեպտ. 2): Ազգային պայքարի զինված փուլը: 1994թ. զինադադարը: Արցախի հիմնախնդրի ներկայիս վիճակը:	2	Ավանդական հարցում, հարզախույզ	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
6.	Հայսատանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը	Հայաստանի անխախության գործընթացի սկիզբը: «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» (1990թ. օգոստոսի 23): Հայաստանի անկախության մասին հանրաքվեն: Հայաստանի անկախ պետականության կայացումը: Հայաստանի հանրպետության միջազգային	2	բանավեճ-քննարկում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24

		ճանաչումը:			
7.	ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը	ՀՀ սահմանադրությունը, դրոշը, օրհներգը, զինանշանը:	2	Ավանդական հարցում, հարզախույզ	ՀՀ սահմանադրություն, համացանց

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

Հ/Հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[11]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[12]
1.	Սասունի 1894 և Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունները:	Սասունի1894 և Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունները:	Ռեֆերատ, Բանավեճ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, քննարկում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,18,19,24
2.	1896 թ. Վանի ինքնապաշտպանություն: 1897 թ. Խանասորի արշավանքը:	1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը: 1897 թ. Խանասորի արշավանքը:	Ռեֆերատ, Բանավեճ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, քննարկում	Գ 1, 2,7,8,12,13,14,18,19,24

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	Հայկական հարցի միջազգայնացումը: Սան-Ստեֆանոյի կոնֆերանսը:	Հայկական հարցի ծագման հարցը հայ պատմագիտության մեջ: Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը. հայկական հարցի միջազգայնացումը: Սան-Ստեֆանոյի կոնֆերանսը: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը: Եվրոպական պետությունների և Ռուսաստանի հակամարտությունները: Հայկական ազգային պատվիրակության գործունեությունը: Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագիրը: 1878թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական պայմանագիրը: 1878թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական համաձայնագիրը:	Ռեֆերատ Բանավեճ	Դասընթացի ընթացքում:	Խաղ-քննարկում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,20,24
4.	Բեռլինի կոնգրեսը: Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում:	Բեռլինի կոնգրեսը: Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում: Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը: Հայկական հարցի միջազգայնացումը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, Բանավեճ	Գ 1, 2,5,7,8,12,13,14,20,24
5.	Ֆիդայական շարժումը	Ֆիդայական շարժման ակզբնավորումը: Ֆիդայական շարժման ականավոր գործիչները (Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Հրայր, Գևորգ Չաուշ, Արաբո և այլք): Ֆիդայական շարժման ընթացքը, հետևանքները: Ազատագրական պայքարի նոր մարտավարությունը	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, Բանավեճ	Գ 1, 2,5,7,8,12,13,14,18,19,24

6.	Աղբյուր Սերոբ		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,1419,,24
7.	Անդրանիկ		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,19,24
8.	Գևորգ Չաուշ		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,7,8,12,13,1419,,24
9.	Հրայր Դժոխք		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,7,8,12,13,14,19,24
10.	Արաբո		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,7,8,12,13,14,19,24
11.	Վանի Սև խաչ ազատագրական կամակերպությունը	Վանի«Միություն ի փրկություն» խմբակը: Վանի «Սև խաչ» կազմակերպությունը	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
12.	Կարինի Պաշպան Հայրենյաց կազմակերպույթունը		Ռեֆերատ Բանավեճ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 25,,7,8,12,13,14,24

13.	Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները	Զինված պայքարով Հայաստանն ազատագրելու նպատակով ստեղծված խմբակներն ու կազմակերպությունները: Ալեքսանդրապոլի «Բարենպատակ» ընկերությունը: Երևանի «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը: Թիֆլիսի հայրենասիրական խմբակը: Վանի «Միություն ի փրկություն» խմբակը: Վանի «Սև խաչ» կազմակերպությունը	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, Բանավեճ	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
14.	Ա.Արմենական կուսակցություն	Կուսակցությունների առաջացման պատմական պայմանները, անհրաժեշտությունը և խնդիրները: Ազգային կոաակցությունները Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի կազմակերպիչներ և ղեկավարներ: Ա.Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: Արմենական կոաակցությունը և «Արմենիա» թերթը:	Ռեֆերատ Բանավեճ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում,	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
15.	Հնչակյան կուսակցություն	Հնչակյան կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Հնչակ» թերթը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24

17.	Հ.Հ.Դաշնակցություն	Հ.Դաշնակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Դրոշակ» թերթը	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
18.	Հայկական հարցը 1912-1914 թթ	1912թ. Բալկանյան 1-ին պատերազմը: Հայկական հարցի վերաբացումը: Գևորգ Ե կաթողիկոսի դիմումը ռուսաց կայսրին: Կ.Պոլսի ազգային ժողովի դիմումը մեծ տերություններին: Պողոս Նուբարը Գևորգ Ե կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Եվրոպայում: Մեծ տերությունները և Հայկական հարցը: Ռուսաստանի ակտիվ աջակցությունը Հայկական հարցին: Հայկական բարենորոգումների ռուսական նախագիծը (Ա.Մանդելշտամ): Մեծ տերությունների տարաձայնությունները Հայկական հարցում: Գերմանիայի դիրքորոշումը: 1914թ. հունվարի 26-ի ռուս –թուրքական համաձայնագիրը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,20,24

19.	1915 թ. ինքնապաշտպանական մարտերը	Ինքնապաշտպանական մարտերը Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Կարահիսարում, Սուեդիայում, Ուրֆայում, Շատախում: Ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը Հայկական սփյուռքի առաջացումը	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,11,,12,13,14,24
20.	Մայիսյան հերոսամարտերը, Սարդարապատ	Թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում: Մայիսյան հերոսամարտերը, Սարդարապատ	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,11,12,13,14,24
21.	Մայիսյան հերոսամարտերը, Բաշ-Ապարան	Թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում: Մայիսյան հերոսամարտերը, Բաշ-Ապարան	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,11,12,13,14,24
22.	Մայիսյան հերոսամարտերը, Ղարաքիլիսա	Թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում: Մայիսյան հերոսամարտերը: Ղարաքիլիսա	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,11,12,13,14,24
23.	Հայաստանի Առաջին հանրապետության հռչակումը	Հայաստանի Հանրապետության հռչակումը: Անկախ պետականության կայացումը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում, Բանավեճ	Գ 1, 2,5,7,8,9,10,11,12,13,14 ,15,16,17,22,24, 26

24.	Զանգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.	Օսմանյան զորքերի ներխուժումը Անդրկովկաս և Զանգեզուրի համար Ադրբեջանի կողմից ահագնացող վտանգի ստեղծումը: Արցախն ու Զանգեզուրը նվաճելու անգլո-ադրբեջանական գործողությունները 1919 թ. գարնանը: Արցախն ու Զանգեզուրը նվաճելու անգլո-ադրբեջանական գործողությունները 1919 թ. գարնանը Զանգեզուրը 1920 թ. սկզբին, Գարեգին Նժդեհի շուռնուխյան ռազմական գործողությունը և դրա արձագանքները:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Խաղ-քննարկում	Գ 1, 2,3,4,7,8,12,13,14,24
25.	Գարեգին Նժդեհ		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,3,4,7,8,12,13,14,24
26.	«Նեմեսիս» գործողությունը		Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24

27.	Սևրի պայմանագիրը	Սևրի պայմանագիրը: Հայկական պատվիրակությունները Փարիզում, նրանց ծրագրերը, կոնֆերանսին ներկայացված հուշագիրը Միացյալ և Անկախ Հայաստանի վերաբերյալ: 1920թ. օգոստսի 10-ի Սևրի պայմանագիրը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
28.	Արցախյան շարժման նոր փուլը	Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը: Ղարաբաղյան շարժման սկիզբը: ԼՂԻՄ պատգամավորների մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը: Զանգվածային հանրահավաքները Երևանում և Ստեփանակերտում: Սումգայիթյան ողբերգությունը: Ազգային պայքարի վերելքը: ՀՀ գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989թ. համատեղ որոշումը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին: ԼՂՀ անկախության հռչակումը (1991թ. սեպտ. 2): Ազգային պայքարի զինված փուլը: 1994թ. զինադադարը: Արցախի հիմնախնդրի ներկայիս վիճակը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24

29.	Հայաստանի անկախության հռչակագիրը: Անկախ պետականության վերականգնումը	Հայաստանի անխախության գործընթացի սկիզբը: «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» (1990թ. օգոստոսի 23): Հայաստանի անկախության մասին հանրաքվեն: Հայաստանի անկախ պետականության կայացումը: Հայաստանի հանրպետության միջազգային ճանաչումը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	Գ 1, 2,5,7,8,12,13,14,24
30.	ՀՀ Խորհրդանիշները	ՀՀ սահմանադրությունը, դրոշը, օրհներգը, զինանշանը:	Ռեֆերատ	Դասընթացի ընթացքում:	Ավանդական հարցում	ՀՀ սահմանադրություն, համացանց

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Համակարգչային լսարան
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	-
Սարքեր, սարքավորումներ	Էլեկտրոնային գրադարան, պրոեկտոր

[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

Համակարգչային ծրագրեր	Canva, flippity.net, quizizz, Microsoft Word, Microsoft Excel և այլ
Այլ	

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,

  Հայոց պատմություն դասընթացի ընթացքում ուսանողը հարցվում է երկու անգամ: Յուրաքանչյուր անգամ գնահատվում է մինչև 20 միավոր:
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,

Հայոց պատմություն դասընթացի ընթացքում ուսանողը ինքնուրույն աշխատանք ներկայացնում է 1 անգամ: Յուրաքանչյուր անգամ

[14] ԿԱՆՈՆԱԿԱՐԳ << ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ >> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ (04.01.2024)

գնահատվում է մինչև 20 միավոր։

- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր։

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով։

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով։[15]

Գնահատման մեթոդներն ու չափանիշները.

Ուսանողը դասընթացին կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ողջ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է հիշյալ բաղադրիչներին համապատասխան:

Գնահատման սկզբունքները

Ինքնուրույն աշխատանք	20 միավոր
Սեմինար աշխատանք	գումարային 40 միավոր
Առաջին ընթացիկ ստուգում	20 միավոր
Երկրորդ ընթացիկ ստուգում	20 միավոր

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1.Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացում

2.Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ .

[15] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի։

3. Ֆիդայական շարժում

4.Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները

5.Ազգային կուսակցությունների առաջացումը

6.Հայկական հարցը 1912-1914 թթ.

7.Հայոց Մեծ եղեռնը

8.1915 թ. ինքնապաշտպանական մարտերը

9.1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը

10.Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ.

11.Զենգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.

12.Արցախյան շարժման նոր փուլը

13.Հայսատանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը

14. ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը

Ա) 1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի –9-10---շաբաթվա ընթացքում

- **Ընդգրկված թեմաները.**

1.Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացում

2.Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ .

3. Ֆիդայական շարժում

4.Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները

5.Ազգային կուսակցությունների առաջացումը

6.Հայկական հարցը 1912-1914 թթ.

7.Հայոց Մեծ եղեռնը

Բ) 2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում

- **Ընդգրկվող թեմաները.**

1. 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը

2. 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի հանրապետության հռչակումը

3. Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ.

4. Զենգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ.

5. Արցախյան շարժման նոր փուլը

6. Հայսատանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը

7. ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ բոլոր մասնագիտությունների համար

Կրթական ծրագիր՝ բոլոր կրթական ծրագրերի համար

Որակավորման աստիճան՝ բակալավր

Վանաձոր 2026

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-067 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ II**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	28	Դասախոսություն	14
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Հայոց պատմության հիմնահարցեր առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարի և հայոց պետականության պատմության վերաբերյալ:			
Դասընթացի վերջնարդյունքները	**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.** ***Գիտելիք*** Հայոց պատմության հին, միջին և նոր շրջանների ազատագրական պայքարը, հայոց պետականության պատմությունը, հայ հասարակական-քաղաքական հոսանքների ձևավորումից մինչև Հայաստանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը ***Հմտություն***			

	√ տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) √ ունենա սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ √ ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների **Կարողունակություն** √ առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն √ վերլուծության և համադրության կարողություն √ քննադատության և ինքնաքննադատության կարողություն √ միջմշակութային տարբերությունները և բազմազանությունները ընկալելու կարողություն √ կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները √ կարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից
Դասընթացի բովանդակությունը	**Թեմա 1.** Հայկական հարցի ծագումը և նրա միջազգայնացում **Թեմա 2.**Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը XIXդ. 90ական թթ. **Թեմա 3.** Ֆիդայական շարժում **Թեմա 4.**Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները **Թեմա 5.** Ազգային կուսակցությունների առաջացումը **Թեմա 6.** Հայկական հարցը 1912-1914 թթ. **Թեմա 7.** Հայոց Մեծ եղեռնը **Թեմա 8.** 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը **Թեմա 9.** 1918 թ. մայիսյան հերոսամարտերը. Հայաստանի

	հանրապետության հռչակումը **Թեմա 10.** Հայաստանի Առաջին հանրապետությունը 1918-1820 թթ. **Թեմա 11.** Զենգեզուրի ինքնապաշտպանությունը 1919-1921 թթ. **Թեմա 12.** Արցախյան շարժման նոր փուլը **Թեմա 13.** Հայսատանի անկախության հռչակագիրը. անկախ պետականության վերականգնումը **Թեմա 14.** ՀՀ պետական խորհրդանիշները, դրոշը, օրհներգը, զինանշանը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ՝ √ ինքնուրույն աշխատանքի կատարում, √ ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն, հմտություններ և կարողություններ, √ Հարզախույզ, ճեպահարցում √ թեստային առաջադրանքներ՝ պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով հարցերով: <u>**Գնահատման սկզբունքները**</u> √ Սեմինար պարապմունքները- Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսանող գործնական աշխատանքներից գնահատվում է 2 անգամ՝ յուրաքանչյուրը մինչև 20 միավոր (17 միավոր հանձնարարված նյութի գնահատում, 3 միավոր 3-ական հարցերի միջոցով ուսանողի վերլուծելում համեմատելու, վերհիշելու ունակությունների գնահատում)
Գրականություն	**Պարտադիր** 1. Սիմոնյան Հր. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2000թ.

2. Սիմոնյան Հր. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2012թ.

3. Մելքոնյան Ա, Մինասյան Է. «Հայ ժողովրդի պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 2009թ.

4. Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմության ակնարկներ (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջ», Երևան, 2018

5. Էդուարդ Դանիելյան, Աշոտ Մելքոնյան «Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը», Երևան, 2015

6. Հայ ժողովրդի պատմություն, հտ. IV–VIII, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1967, 1970, 1972, 1974, 1981:

7. Ժամկոչյան Հ., Գ. Աբրահամյան Ա., Մելիք- Բախշյան Ս.

« Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1876:

8. Խաչատրյան Կ. «Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.», Երևան, 2007:

Լրացուցիչ

1. Գալոյան Գ. Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, 2004թ.

2. Հայ ժողովրդի պատմություն, հտ. I-IV, ՀՀ ԳԱԱ հրատ., 2018

3. Համբարյան Ա.Ա., «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում», Երևան, 1999:

4. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2014: Հ. 2, Գիրք II: Միջին դարեր: (I X դարի կես- XVII դարի առաջին տասնամյակ):

5. Հայոց պատմություն /խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Եր., 2010: Հ. 3,: Գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես -XIX դարի վերջ):

6. Ավետիսյան Հ.Ա. «Հայկական հարցը 1918թ.». Երևան, 1997

7. Վրացյան Ս. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1993

8. Սիմոնյան Հր. «Անդրանիկի ժամանակը», գիրք 1-2,

	Երևան, 1996: